

Մ Ա Ք - Մ Ա Հ Ո Ն

Գ Ո Ւ Ք Ս Մ Ա Ճ Է Ն Թ Ա Յ

Իտալիոյ պատերազմին (1859) քաջայաղթ զօրավարաց մին է ՄԱՔ-ՄԱՀՈՆ, Գաղղիոյ այս երկրորդ կայսերութեան զինուորական փառքերէն մէկը, որ Ա Նափոլէոնի պանծալի ժամանակները ծնաւ 1808-ին, Իւր ցեղին սկիզբը բուն Իւլանտայէն է, (ինչպէս Մաֆ վերագրին ալ կցուցանէ), որ Սթուարթեանց զփաղդ տանը հաւատարիմ մնալով՝ անցաւ իրազգիա եւ հոն առաջ եկաւ: Մաք-ՄաՀոնի հայրը՝ Գաղղիոյ սեպուհ (փեռ) էր, եւ Կարոլոս ժ թագաւորին բարեկամ, ուստի եւ կրքաւ որդւոյն լաւ դատարարութիւն մը տալ Սէն-Սիրի զինուորական դպրոցին մէջ:

Ալֆէրիի արշաւանաց ժամանակ սկսաւ առաջ երթալ Մաք-ՄաՀոն, եւ 1857-ին Կոստանդինա քաղաքին առման ժամանակը քաջութիւններ ցուցուց, որով եւ զինուորական աստիճաններու մէջ շուտով բարձրացաւ, մինչեւ որ 1852-ին զօրավար (général) անուանեցաւ:

Արեւելեան պատերազմն որ բացուեցաւ՝ Մաք-ՄաՀոն զօրավարը 1855-ին զրկուեցաւ իրիւմ, ու հոն փայլեցաւ Սեպտեմբերի 8-ին նշանաւոր օրը, յորում իւր զինուորներովը յարձակեցաւ Մալաքովի վրայ, ու յետ բազում արիւնհեղութեանց յերկոցունց կողմանց՝ վերջապէս տիրեց այն զօրաւոր ամրութեանցն որ Մալաքովի բանալիքը կհամա-

րուէին: Այն քաջութեանը փոխարէն ընդունեցաւ Պատուոյ լեգէոնի մեծ խաչը ու քանի մը ամսէն անուանեցաւ ծերակուտի անգամ (sénateur):

1857-ին Գալլիներուն դէմ եղած արշաւանաց ժամանակ՝ Մաք-ՄաՀոն հետեւակազօրուն զօրավարն էր, եւ մեծ ճարտարութեամբ Գալլիները զարկաւ ու հալածեց. որով անուանեցաւ ընդհանուր հրամանատար ցամաքային եւ ծովային զօրութեանց Ալֆէրիի:

Այն մեծ պաշտօնին մէջ էր երբ կայսրը կոչեց զնա յիտալիա (1859) Ալպեան բանակին երկրորդ գնդին զօրավարելու: Ամիս մը յետոյ պատերազմի դաշտին վրայ անուանեցաւ Մաք-ՄաՀոն դուքս Մաֆեկայ եւ մարեշալ Գաղղիոյ, արժանապէս վարձատրուելով նոյն օրը ցուցուցած մեծամեծ քաջութեանցը համար:

Այս զօրավարը իւր քաջութեանն ու հաստատուն ընաւորութեանը հետ՝ ունի նաեւ անոյշ կերպ մը, որով պատերազմէն դուրս՝ հեղ ու ամենակիրթ անձ մի է:

Մեր ազգին վրայ եւս բաւական համարում կցուցնէ այս մեծահամբաւ զօրավարը, եւ ոչ սակաւ տեղեկութիւն ունի մեր անցեալ եւ այժմու պատմութեանցը, ինչպէս որ առիթ ունեցանք ճանչնալու՝ երբ նորա մարդասէր հիւրընկալութիւնը վայելեցինք իրազգիա:

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

Խալիպեան Ուսումնարանիս աշակերտաց արձակուրդը այս տարի պիտի լինի Յունիսի 28-ին, եւ պարապոյ ժամանակը պիտի վերջանայ Յոգոստոսի 12-ին:

Այն ծնողք որ կամենան իւրեանց որդիքը տուն առնուլ, պէտք է Ֆանապարիի ծախքը հասցնեն Ուսումնարանի Տեսչին ձեռքը մինչեւ Յունիսի 20-ը, եւ Յոգոստոսի 10-ին դարձնեն նորէն որդիքը յՈւսումնարանս:

ՎԵՐԱՏԵՍՈՒՉՆ: